սկսած XVIII դ. վերջից, Արևելքում լույս տեսնող մամուլը և պարբերականները հանդիսանում են, որոշ դեպքերում, եվրոպական աղբյուրներ արևելյան երկրների ու ժողովուրդների պատմության տարբեր ժամանակաշրջանների վերաբերյալ: Պատկառելի թիվ են կազմում նաև արխիվային փաստաթղթերը, հիշողություններն ու նկարագրությունները, որոնք կատարել են Արևելքի երկրներում եղած կամ ծառայած առևտրականները, ռազմական գործիչները, դիվանագետները, քարտեզագիրները և այլ հայ գործիչներ: Դիրեկտիվ օրգանների վերջերս կայացած որոշման մեջ նախատեսվում է սեկտորի բազայի վրա կազմակերպել արևելագիտության ինստիտուտ, որտեղ ուսումնասիրություններ կկատարվեն նաև Հին Արևելքի, միջին դարերի, բյուզանդագիտության ու կովկասագիտության վերաբերյալ և նորաստեղծ ինստիտուտը կունենա լրիվ արևելագիտական գիտահետազոտական հիմնարկի պրոֆիլ: Այս ամենը, անշուշտ, հնարավորություն կտան հայ արևելագետներին ընդլայնելու իրենց գործունեության ասպարեզը և կանգնելու սովետական արևելագիտության առաջավոր դիրքերում:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների հիմնական բնագավառները երեքն են՝ Հայաստանի հնագիտությունը, ազգագրությունը և բանահյուսությունը:

Նշված բնագավառներում կատարվող աշխատանքները Հայաստանում գիտական հիմքերի վրա դրվեցին դեռևս անցյալ դարի վերջին երեք տասնամյակներին, երբ Ա. Երիցյանը, Ս. Ուվարովը, ապա Ն. Մառը և ուրիշներ ձեռնարկեցին պեղումներ, Գ. Սրվանձտյանցը, Ս. Հայկունին, ապա Ն. Լալայանը և ուրիշներ նշանակալից աշխատանքներ կատարեցին հայկական բանահյուսության և ազգագրության բնագավառում:

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում կատարվող հնագիտական աշխատանքների պսակը կազմեցին Անիի պեղումները: Ն. Մառի ձեռնարկած և մեծամեծ ջանքերով իրականացրած այս պեղումները իրենց ծավալով, տևականությամբ (1892—1893, 1904—1917) և հսկայական արդյունքներով, մինչ սովետական շրջանում եզակի երևույթ էին:

Բանահյուսության բնագավառում բացառիկ նշանակություն ունեցավ «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպի տարբերակների գրառումը, հայկական հեքիաթների հավաքումը, բառ ու բանի, առասպելների և վիպական երգերի ուսումնասիրությունը, մասնավորապես Մ. Աբեղյանի կողմից: Երաժշտական ֆոլկլորի հավաքման ու մշակման մարզում փայլատակեց Կոմիտասի հանճարը:

Ազգագրական և բանահյուսական նյութերի հավաքման և հրատարակման գործում բացառիկ նշանակություն ունեցավ Ազգագրական ընկերության և նրա օրգանի՝ «Ազգագրական հանդեսի» հիմնադրումը Ն. Լալայանի ջանքերով:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո նշված ուղղություններով աշխատանքները հետզհետե ծավալվեցին և ավագ սերնդի վաստակաշատ գիտնականների հետ միասին գիտահետազոտական աշխատանքի նվիրվեցին երիտասարդները:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո պատմական բոլոր հուշարձանները հռչակվեցին համաժողովրդական սեփականություն և առնվեցին պետական պահպանության ներքո: 1921 թ. հիմնադրվեց Հայաստանի պետական թանգարանը, իսկ 1923 թ. Հնությունների պահպանության կոմիտեն: 1924 թ. հիմնադրվեց նաև գիտական հաստատություն, որը զբաղվելու էր հայ ժողովրդի պատմության, լեզվի և մշակույթի, այդ թվում նաև հուշարձանների ուսումնասիրության գործով: Վերջին բնագավառում մեծ վաստակ ունեցան մասնավորապես հայ ճարտարապետության պատմության բազմավաստակ ուսումնասիրող Թորոս Թորամանյանը և հնագետ, գրոֆ. Աշխարհիրեկ Քալանթարը:

1920-ական թթ. մինչև 1930-ական թվականների սկզբները մեծ աշխատանք կատարվեց հուշարձանների հաշվառման, նկարագրության, չափագրությունների և լուսանկարահանումների ուղղությամբ: Ձեռնարկվեցին նաև բնակավայրերի և դամբարանների պեղումներ[1], շարունակվեց հայերեն և ուրարտերեն վիմագիր արձանագրությունների հավաքման գործը, որը սկսված էր դեռևս XIX դ.:

1931 թ. ձեռնարկվեցին հին Վաղարշապատի պեղումները[2], որոնք, դրժբախտաբար չշարունակվեցին: 20-ական թթ. վերջերից պրոֆեսորներ Ա. Քալանթարի, Ն. Լալայանի, Ս. Տեր-Ավետիսյանի, ճարտարապետ Թ. Թորամանյանի հետ միասին սկսեցին հնագիտական աշխատանքներ կատարել երիտասարդ մասնագետները՝ Կ. Ղաֆադարյանը, Ս. Բարխուդարյանը, Ե. Բայբուրդյանը, Հ. Նդիազարյանը և ուրիշներ: Հայաստանում իր հնագիտական գործունեությունն սկսեց Բ. Բ. Պիոտրովսկին:

1936 թ. Հ. Օրբելին՝ Պետական էրմիտաժի (Լենինգրադ) և Հնությունների պահպանության կոմիտեի աշխատակիցներից արշավախումբ կազմելով, պեղումներ կատարեց Անբերդում[3]: Հնագետ Ե. Բայբուրդյանը 1936—1937 թթ. սկսեց Շենգավիթի հնադարյան երկրագործական բնակավայրի պեղումները[4]:

Հայաստանում կատարվող հնագիտական աշխատանքների մեջ վճռական բեկում տեղի ունեցավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի հիմնադրմամբ (1935): 1937 թ. ձեռնարկվեցին միջնադարյան խոշորագույն քաղաք Դվինի պեղումները (ղեկավար՝ գրոֆ. Ս. Տեր-Ավետիսյան), իսկ 1939 թ. Կարմիր բլուրի՝ ուրարտական Թեյշեբաինի քաղաքի պեղումները:

Դեռևս պատերազմը չավարտված, 1943 թ. հիմնադրվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, որի պատմության ինստիտուտի կազմում գործել սկսեց հատուկ հնագիտական բաժին:

Հայրենական պատերազմից անմիջապես հետո 1946 թ. վերսկսվեցին Դվինի պեղումները՝ գրոֆ. Կ. Ղաֆադարյանի և Կարմիր բլուրի պեղումները՝ գրոֆ. Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ:

Տակավին 1950-ական թվականներին Հայաստանի հնագետների առջև ծառացավ հնագիտական բոլոր դարաշրջանների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այժմ այդ խնդիրն իրականացնում է Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը, որը հիմնադրվեց 1959 թ. կեսերին:

Կայնորեն ծավալված աշխատանքների արդյունքները համառոտակի կրնութագրվեն ժամանակագրական հաջորդականությամբ:

Հին քարեղարյան գործիքներ Հայաստանում գտնվել էին դեռևս 1898 և 1933 թթ., սակայն դրանք պատշաճ ուշադրության չէին արժանացել, իսկ ստորին քարեղարի (հին քարեղարի առավել վաղ դարաշրջանը) գոյությունը բացառվում էր:

1945—1951 թթ. հնագետ Ս. Սարգսյանը հայտնաբերեց ստորին քարեղարյան կայան և մեծ թվով գործիքներ Արտին լեռան լանջերին, մանավանդ Սատանի դար կոչվող բարձունքի վրա: Քարեղարյան գործիքներ հայտնաբերվեցին նաև Արզնի-Նուռնուս դարավանդում: Նույն հետքերով ուսումնասիրություններ կատարեցին նաև Ս. Զամյատնինը, Հ. Պանիչկինան: Պարզվեց, որ Հայաստանը եղել է մարդկային մշակույթի բնօրրաններից մեկը՝ սկսած հին քարեղարի վաղագույն շրջաններից, և մարդը իր քարեղարյան մշակույթի հետքերն այստեղ թողել է նաև հետագա դարաշրջաններում[5]:

Հին քարեղարյան կայաններ հայտնաբերվեցին նաև Հայաստանի այլ շրջաններում:

Հնագետները աշխարհ էին արել մի շատ կարևոր բնագավառ՝ քարայրների ուսումնասիրությունը: Կենսաբան Ազիզյանը մարդու բնակության հետքերով քարայրներ հայտնաբերեց Երևանի մոտ, Հրազդանի կիրճում: 1967—68 թթ. հնագիտության ինստիտուտը ձեռնարկեց Երևանյան լճի աջ ափին գտնվող մի քարայրի պեղումները, հայտնաբերելով 80—40 հազար տարվա հնություն ունեցող հազարավոր քարե գործիքներ (քարայրների ուսումնասիրությունը շարունակվելու է): Հայտնաբերվել են նաև նոր քարեղարյան մի շարք կայաններ[6]:

Շենգավիթի վերսկսված պեղումները (ղեկ.՝ Ս. Սարգսյան) ցույց տվեցին, որ այս հնագույն երկրագործական բնակավայրը բազմաշերտ է, նրա գոյությունն սկսվել է դեռևս IV հազարամյակի վերջերին և հասնում է մինչև III հազարամյակի վերջերը, պարունակելով շատ հարուստ նյութեր, ինչպես նոր քարեղարին հաջորդած էնեոլիթի (պղնձի և քարե դարի վերջերից) նույնպես և վաղագույն բրոնզի դարաշրջանից:

Շուտով էջմիածնի շրջանում, մասնավորապես Թեղուտ կոչվող բնակավայրում հնագետ Ռ. Թորոսյանը հայտնաբերեց նաև վաղ էնեոլիթի V—IV հազարամյակների մշակույթ, դրանով իսկ Հայաստանի վաղագույն հնագիտական դարաշրջանների հաջորդական օղակների պակասը լրացվեց: Այս նույն դարաշրջանի բնակավայրեր հայտնի են էջմիածնի շրջանի նաև այլ վայրերում:

Հատուկ ուսումնասիրության առարկա դարձավ III հազարամյակի էնեոլիթյան և վաղագույն բրոնզեդարյան մշակույթը, որն արդեն հայտնաբերված է մի քանի տասնյակ բնակավայրերում[7]: Շենգավիթից բացի պեղումներ են կատարվում նաև Ջրահովիտում (աշխատանքների ղեկ.՝ Է. Խանզադյան):

Հայաստանի նախնադարյան բնիկները թողել են նաև մշակույթի մի այլ բնագավառի մեծ թվով հուշարձաններ՝ ժայռապատկերներ, որոնց մի քանի խմբերը հայտնի էին դարձել դեռևս 1910-ական թվականներից: Նրանցով

1920—1930-ական թվականներին զբաղվեց պրոֆ. Ա. Քալանթարը, սակայն ժայռապատկերները լայն ուսումնասիրության առարկա դարձան 1960-ական թվականներին: Խոշոր բանակությամբ ժայռապատկերներ հայտնաբերեցին Ս. Սարդարյանը և Ս. Պետրոսյանը Դեղամա լեռներում. Արագածի լանջերին և այլուր:

1967 թ. հնագիտության և ազգագրության ինստիտուտը կազմեց քարայրներ և ժայռապատկերներ ուսումնասիրող միացյալ արշավախումբ (ղեկ.՝ պրոֆ. Հ. Մարտիրոսյան), որն զբաղվեց քարայրների և Դեղամա ու Վարդենիսի լեռների և այլ վայրերի ժայռապատկերների ուսումնասիրությամբ: Կազմվեց նաև երկրորդ արշավախումբը Սյունիքի և Վայոց ձորի ժայռապատկերները ուսումնասիրելու համար (ղեկ.՝ Դ. Կարախանյան): Հայտնաբերվեցին ժայռապատկերների բազմաթիվ նոր խմբեր, հավաքվել և ուսումնասիրվում են հազարավոր ժայռապատկերներ, որոնց մի մասը հրատարակված է[9]:

Դրանք ներկայացնում են Հայաստանի նախնադարյան բնիկների կյանքը. զբաղմունքները, իրական և իռացիոնալ առասպելաբանական, կոսմոգոնիական աշխարհանանաչողությունը, միաժամանակ հանդիսանալով հնագույն արվեստի բազմահարուստ և նշանավոր հուշարձաններ:

Բրոնզեդարյան հնավայրերի և դամբարանադաշտերի պեղումներ ինստիտուտի հնագետները կատարել են հանրապետության տարբեր վայրերում (Դոլովինո, Լենինական, Կիրովական, Սևանի ափեր և այլն), սակայն իրենց ծավալով և արդյունքներով առավել նշանավոր են Լճաշենի և Մեծամորի պեղումները: Լճաշենի արշավախումբը (ղեկ.՝ Հ. Մնացականյան), պեղելով Սևանի ափի ցամաքած տարածքի վրա գտնվող դամբարանաբլուրները, հայտնաբերել է սայլեր, ռազմակառքեր, հարուստ և բազմազան խեցեղեն, գեղարվեստական բարձր մշակումով բրոնզե իրեր և այլ առարկաներ ու զարդեր: Ուշագրավ է, որ դամբարանային այդ մշակույթը կապվում է Լճաշենի նախաուրարտական ամրոցի հետ[10].

Մեծամորի արշավախումբը (ղեկ.՝ երկրաբան Կ. Մկրտչյան, տեղական՝ հնագետ Է. Խանզադյան) հայտնաբերել է մի շարք մետաղների մշակման հետքեր, հանքի հորատման հարմարանքներ, ձուլման պրոցեսի հետ կապվող նյութերի արտադրության մի ամբողջ համակարգ, նախաուրարտական շրջանի երկու սրբատեղի՝ կավից պատրաստված կուռքերով, պաշտամունքային նպատակներով երկնային լուսատուների դիտման հարմարանք՝ ժայռերի վրա և այլն:

Ձեռնարկված է Իշևան-Տավուշի միկրոշրջանի հնագիտական ուսումնասիրությունը (Ս. Եսայան): Հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել Հայաստանի կիկլոպյան ամրոցները (Գ. Միքայելյան): Բրոնզեդարյան մի շարք հուշարձանների հետ միասին հանդիպում է նաև վաղ երկաթի դարաշրջանի մշակույթը: Հայաստանի բրոնզեդարյան և վաղ երկաթի դարաշրջանի մշակույթին ընդհանրացնող աշխատություն է նվիրել պրոֆ. Հ. Մարտիրոսյանը[11]:

Հայաստանը Սովետական Միության միակ հանրապետությունն է, որտեղ հնագետը կարող է ուսումնասիրել Հին արևելյան քաղաքակրթության հուշարձանները: Կարմիր բլուրի կամ ուրարտական Թեյշեբաինի քաղաքի՝ դեռևս 1939 թ. սկսած, պեղումները շարունակվում են (ղեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Պիոտրովսկի): Քաղաքի միջնաբերդում բացվել է մի հսկայական շենք՝ ավելի քան 150 բաժանմունքով, հացահատիկի շտեմարաններով, գինու մառան-

ներով, ֆունջուրի ձեր հանելու, զարեչուր և պանիր պատրաստելու գործատներով: Գտնվել են հսկայական ֆունկցիայամբ կավե անոթներ, մետաղե գործիքներ, զենքեր և այլ առարկաներ, մեծ թվով սեպագիր արձանագրություններ. Քաղաքային թաղամասերի պեղումները (ղեկ.՝ Հ. Մարտիրոսյան) բացահայտում են այստեղ գտնվող մինչուրարտական բնակավայրի մշակույթի և ուրարտական քաղաքի սոցիալ-տնտեսական կառուցվածքի պատկերը[12]:

1950 թ. ձեռնարկվեցին Արին-բերդի կամ ուրարտական Էրեբունի քաղաքի պեղումները (ղեկ.՝ հարտ. դոկտոր Կ. Հովհաննիսյան): Այստեղ բացվեցին միջնաբերդի պաշտպանական սիստեմի բազմաթիվ ճարտարապետական հուշարձանների՝ տաճարների, պալատական և տնտեսական շենքերի ավերակները, որոնց մեջ հայտնաբերված ուրարտական որմնանկարները պատկանում են Հին արևելյան արվեստի առավել նշանավոր հուշարձանների թվին[13]: Հայտնաբերվեցին քաղաքի հիմնադրման վավերագիր արձանագրություններ, ապա և վաղ հայկական շրջանի ճարտարապետական շենքեր և հնագիտական նյութեր, որոնք հիմք ծառայեցին Էրեբունի-Երևանի 2750-ամյակի նշմանը, որի տոնահանդեսը տեղի ունեցավ 1968 թ. աշնանը:

1962 թ. սկսվեցին նաև ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքի պեղումները (արշավախմբի ղեկ.՝ պրոֆ. Հ. Մարտիրոսյան), որտեղ հայտնաբերված նյութերը բացահայտում են ուրարտական այս խոշոր տնտեսական կենտրոնի նշանակությունը[14]: Ուրարտուի պատմությանը և մշակույթին նվիրված արժեքավոր ընդհանրացնող ուսումնասիրություններ է կատարել Բ. Պիոտրովսկին[15]: Ուսումնասիրության առարկա դարձան ուրարտական սեպագիր արձանագրությունները[16], և հրատարակվեց նրանց ժողովածուն սվելի ամբողջական ձևով՝ մեծ թվով նորահայտ արձանագրությունների ընդգրկմամբ[17]:

Ուրարտուի անկմանը հետևում է հայոց պատմության հին դարաշրջանը (մ. թ. ա. VI—մ. թ. III դդ.), որը նշանավորվել է հայ ժողովրդի կազմավորման ավարտով, հայկական պետության առաջացմամբ և երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային խոշոր առաջադիմությամբ:

Հայ ժողովրդի և նրա մշակույթի պատմության այս կարևորագույն դարաշրջանը, սակայն, հնագիտորեն մնում էր համարյա չուսումնասիրված: Այդ բերին լրացնելու համար ձեռնարկվեցին 1949 թ. Գառնի ամրոցի, իսկ 1962 թ.՝ Հին Արմավիրի պեղումները:

Հին Արմավիրը իբրև հայոց առաջին մայրաքաղաք գոյացավ ուրարտական Արգիշտիխինիլիի տեղում: Արշավախումբը (ղեկավար՝ 1962—1969 թթ. պրոֆ. Բ. Առաքելյան, 1970 թ. սկսած՝ Գ. Տիրացյան) պարզեց, որ Արմավիրը Ուրարտուից հետո ազատվել է իր գոյությունը 6—4-րդ դդ., մինչև կդառնար IV դ. վերջերին առաջացած հայկական պետության մայրաքաղաքը, այդ դերը մ. թ. ա. II դ. առաջին կեսին զիջելով Արտաշատին: Հին Արմավիրի պեղումներով բացվել են ճարտարապետական հուշարձաններ, հայտնաբերվել են բազմազան հնագիտական նյութեր, որոնք բնութագրում են անցումն ուրարտական մշակույթից՝ վաղ հայկականին (VI—IV դդ.), ապա և հելլենիստական դարաշրջանի (մ. թ. ա. III—I դդ.) մշակույթին, երբ երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքն առավել բարձր զարգացման է հասնում և ընդարձակվում են կապերը հարևան երկրների հետ[18]:

Գառնիի պեղումների (ղեկ.՝ Բ. Առաքելյան) շնորհիվ բացված ճարտարապետական հուշարձանները (պալատական շենքերի խումբ, մոզայիկ հատակով

բաղնիք) և հնագիտական նյութերը ժամանակագրորեն կազմում են Արմավիրի նյութերի շարունակությունը և բնութագրում են հայ մշակույթի զարգացումն անտիկ դարաշրջանի երրորդ՝ ուշ անտիկ փուլում (I—III դդ.):

Այսպիսով, Արմավիրի և Դաոնիի պեղումները բացառիկ նշանակություն ունեն Հայաստանի հին դարաշրջանի նյութական մշակույթի ուսումնասիրության համար: Դաոնիի արշավախմբի մի ջոկատ Դ. Տիրացյանի ղեկավարությամբ պեղումներ կատարեց Հացավանի հին ամրոցում:

Ինստիտուտը պեղել և ուսումնասիրել է նաև մի շարք միջնադարյան հուշարձաններ: Առավել խոշոր, տեսական և նշանակալից են եղել Հայաստանի միջնադարյան խոշորագույն քաղաք Դվինի պեղումները (ղեկ.՝ պրոֆ. Կ. Ղաֆադարյան):

Պեղումներով բացվել են IV—XIII դարերի մի շարք նշանավոր հարտարապետական հուշարձաններ, հսկայական քանակությամբ հնագիտական նյութեր՝ գործիքներ, զենքեր, զարդեր, սովորական և ջնարակած խեցեղեն, հախճապակի, ապակեղեն և այլ նյութեր[19], ինչպես և տարբեր դարաշրջանների դրամներ[20]:

Դվինի պեղումները խոշոր նշանակություն ունեն ոչ միայն Հայաստանի, այլև Մերձավոր Արևելքի միջնադարյան քաղաքի կարևորագույն պրոբլեմի լուսաբանության համար: Այդ պրոբլեմին է նվիրված նաև Բ. Առաքելյանի երկհատոր ընդհանրացնող աշխատությունը[21]:

Միջնադարյան հուշարձաններից ինստիտուտը պեղել է նաև Ջրվեժի և Ողջաբերդի վաղ միջնադարյան եկեղեցիների ավերակները (ղեկ.՝ ճարտ. դոկտոր Ն. Տոկարսկի), տվել այդ հուշարձանների վերակազմությունը:

Ն. Տոկարսկին, ապա հնագետ Ս. Հարությունյանը պեղումներ կատարեցին Անբերդում, որոնցով ավելի պարզվեց միջնադարյան այդ նշանավոր ամրոցի պատկերը նրա գոյության տարբեր դարաշրջաններում:

Սյունիքի պատմության համար շատ կարևոր արդյունքներ ստացվեցին Ղափանի շրջանի Վահանավանքի պեղումներից (ղեկ.՝ Գր. Գրիգորյան): 1970 թ. հետախուզական պեղումներ կատարվեցին հին Կումայրիում (ղեկ.՝ Ս. Հարությունյան): Կատարված հնագիտական պեղումների արդյունքները հրատարակվում են «Հնագիտական պեղումներ Հայաստանում» մատենաշարում[22] (լույս են տեսել 1—12 պրակները), «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշարում[23] (լույս են տեսել 1—6-րդ հատորները), ինչպես և առանձին մենագրությունների[24] և հոդվածների ձևով, մեծապես հարստացրել են մեր գիտելիքները Հայաստանի և նրա բնակչության հազարամյակների պատմության և մշակույթի վերաբերյալ:

Հնագիտական աշխատանքների հետ սերտորեն կապված են եղել նաև վիմագիր արձանագրությունների հավաքումը և հրատարակությունը:

Հայաստանում հայտնաբերված ուրարտերեն, սուրմերերեն, հունարեն և լատիներեն արձանագրություններն արդեն հրատարակված են[25]: Իրականացվում է նաև հայերեն արձանագրությունների հավաքման և նրանց Դիվանի հրատարակության գործը, որը երկար ժամանակ եղել է հայագետների երազանքը: Կ. Ղաֆադարյանը հրատարակել է Հովհաննավանքին, Սանահինին և Հաղբատի վանքերին նվիրված աշխատությունների շարք, ընդգրկելով նաև այդ վանքերի բոլոր արձանագրությունները[26]: Ինստիտուտը ձեռնարկել է նաև հայերեն բոլոր արձանագրությունների Դիվանի հրատարակությունը, որը կազմակերպում և

գլխավորում էր այդ գործի խոշոր գիտակ Ս. Բարխուդարյանը*: Նրան հաջողվեց լույս ընծայել Դիվանի 1—3-րդ պրակները և հրատարակության հանձնել ևս 2 պրակ[27]:

Հայկական արձանագրությունների կեսից ավելին՝ շուրջ 7000 արձանագրություն արդեն հավաքված է և Դիվանի հրատարակությունը շարունակվում է:

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սովետական կարգերի հաստատումից հետո ազգագրական աշխատանքները կենտրոնացվեցին գերազանցապես Հայաստանի պետական բանգարանում, որտեղ աշխատում էին վաստակաշատ գիտնականներ Ն. Լալայանը և Ստ. Լիսիցյանը: Պատմա-հնագիտական-ազգագրական բեղուն աշխատանքներ են կատարում նաև ազրոֆ. Խ. Սամվելյանը: Ն. Լալայանի մահվանից հետո (1931) ազգագրական աշխատանքները գլխավորում էր Ստ. Լիսիցյանը, որը 1920—1930-ական թթ. մեծ բանակությամբ նյութեր հավաքեց Հայաստանի տարբեր ազգագրական շրջանների, մասնավորապես Զանգեզուրի և Ղարաբաղի վերաբերյալ և հանդես եկավ բազմաթիվ հոդվածներով:

Խաչիկ Սամվելյանը «Հին Հայաստանի կուլտուրան» իր եռահատոր աշխատության մեջ խոշոր տեղ հատկացրեց ազգագրական նյութերին և հարցերին[1]: Ստ. Լիսիցյանը առաջին փորձը կատարեց ներկայացնելու մինչսովետական ազգագրության ընդհանուր տեսությունը[2]: Ազգագրական նյութերի հավաքումը նպաստեց նաև նրա կազմած ազգագրական հարցարանը[3]:

Ազգագրագետների ավագ սերունդի ներկայացուցիչների ուշադրությունը սևեռված էր առավելապես անցյալ ժամանակների կամ պատմական ազգագրության հարցերին, սակայն աճում էր ազգագրագետների նոր սերունդը, որի առջև ծառացան նաև ազգագրության ժամանակակից հարցեր:

Հայրենական պատերազմից հետո մեծ ուշադրություն նվիրվեց արշավախմբերի կազմակերպմանը և ազգագրական նյութերի հավաքմանը: Ազգագրական առումով ուսումնասիրության առարկա դարձան հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի շատ հարցեր՝ բնակատեղին և բնակարանը (Դ. Վարդումյան), երկրագործությունն ու երկրագործական գործիքները (պատմ. գիտ. դոկտոր Վ. Բդոյան), փոխադրության միջոցները, զգեստները կամ տարազը[4], գորգագործությունը (Վ. Թեմուրիյան), կիրառական արվեստը, բնակչության նոր կենցաղը[6], մասնավորապես երկրագործության, անասնապահության (Յու. Մկրտումյան), արհեստների (Կ. Սեղբոսյան) բնագավառներում, ժողովրդական չափերն ու կշիռները (Ռ. Վարդանյան), ընտանիքը և ընտանեկան հարաբերությունները[7] (պատմ. գիտ. դոկտոր Էմմա Կարապետյան), ժողովրդական խաղերը[8], երկրագործական օրացույցը, պաշտամունքն ու հավատալիքները (Ա. Օղարաշյան), հայ ազգագրության պատմության հարցերը[9] (Կ. Մելիք-Փաշայան) և այլ հարցեր:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ ազգագրական աշխատանքների շրջանակները ընդլայնվեցին ոչ միայն բեմատիկ ընդգրկմամբ, այլև տարածական առումով: Սովետական Հայաստանի ազգագրագետները աշխա-

* Սեղրաք Գեորգի Բարխուդարյանը վախճանվել է 1970 թ. մայիսին:

տանքներ ծավալեցին նաև հանրապետությունից դուրս գտնվող հայ ազգագրական շրջաններում՝ Վրացական ՍՍՀ սահմաններում՝ Ախալքալակ, Ախալցիխա, Բաթում, Արխազական Ինքնավար Հանրապետություն, Ադրբեջանական ՍՍՀ-ում՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ, Դաղստանի շրջան, Հյուսիսային Կովկասում՝ Կրասնոդարի երկրամասում, Ռոստովի մարզում և այլուր:

Ազգագրագետները ձգտում են ուսումնասիրել նաև Արևմտյան Հայաստանի և այլ վայրերի անհետացող հայ ազգագրական խմբերը[10]:

Արևելյան Հայաստանի ինքնատիպ ազգագրական շրջաններից Զանգեզուրը ժամանակին հատուկ ուսումնասիրության է ենթարկել Ստ. Լիսիցյանը, որի «Զանգեզուրի հայերը» մեծարժեք մենագրությունը լույս տեսավ վերջերս[11]: Հրատարակության է հանձնված Վ. Ալոյանի «Երկրագործությունը Հայաստանում» պատմա-ազգագրական ծավալուն ուսումնասիրությունը:

Հայաստանում կատարված ազգագրական աշխատանքների հիմնական արդյունքները ամփոփվեցին և ընդհանրացվեցին ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի կողմից հրատարակվող «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարի «Կովկասի ժողովուրդները» հատորի «Հայերը» բաժնում[12]:

Ազգագրական նյութերը և ուսումնասիրությունները հրատարակվում են «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարով, որի առաջին պրակը լույս տեսավ 1970-ին[13]:

Այժմ ձեռնարկված են Սովետական Միության պատմա-ազգագրական ատլասի կազմման աշխատանքները, որոնց մասնակցում են նաև Հայաստանի ազգագրագետները՝ կազմելով Կովկասի պատմա-ազգագրական ատլասի Հայաստանին վերաբերող բաժինները:

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1920-ական թթ. շարունակում էին աշխատել բանագիտության ավագ սերնդի ներկայացուցիչները՝ Ն. Լալայանը, Մ. Արեղյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը: 1926 թ. Նրվանդ Լալայանի գլխավորությամբ կազմակերպված արշավախումբն զգալի հանգանակությամբ նյութեր հավաքեց, սակայն արշավախմբերի կազմակերպումը ավելի հանախակի և նյութերի հավաքումն ավելի ծավալուն բնույթ ստացան 1930-ական թթ.: Կ. Մելիք-Օհանջանյանի գլխավորությամբ արշավախմբեր ուղարկվեցին Աշտարակի, Թալինի, Վեդիի շրջանները: Այդ արշավախմբերը, որոնց մասնակցում էին կոմպոզիտոր Ս. Մելիքյանը, Սրբ. Լիսիցյանը, Ա. Ղանալանյանը, Հ. Ջնդին, Ա. Կուժիկյանը և ուրիշներ, գրի առան «Սասնա ծռեր» էպոսի նոր տարբերակները և հավաքեցին մեծ քանակությամբ այլ նյութեր: Մ. Արեղյանը և Կ. Մելիք-Օհանջանյանը ձեռնարկեցին վեպի բոլոր (շուրջ 50) պատումների գիտական հրատարակությունը[1], որը բանագիտության խոշոր նվաճումը եղավ: Վեպի աննախընթաց մասսայականացման գործում հսկայական դեր կատարեց «Սասունցի Դավիթ» վեպի հազարամյակի հանդիսավոր նշումը 1939 թ., երբ և Մ. Արեղյանը, Գ. Արովը և Ա. Ղանալանյանը կազմեցին վեպի համահավաք տեքստը, որը հրատարակվեց հայերեն և ռուսերեն՝ ակադեմիկոս Հ. Օրբելու առաջաբանով[2] և մատչելի դարձավ շատ ժողովուրդների:

«Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» վեպը ներկայումս թարգմանված է մի շարք լեզուներով, որոնց թվում՝ անգլերեն, ֆրանսերեն, ռումիներեն, չի-

նարեն: Այժմ հրատարակության է պատրաստված վեպի 10 լավագույն տարբերակների ռուսերեն թարգմանությունը, որը կատարել է հանգուցյալ ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը: Լույս են տեսել նաև վեպին նվիրված մի շարք ժողովածուներ և գիտական ուսումնասիրություններ[3] Հ. Օրբելու, Կ. Մելիք-Օհանջանյանի հեղինակությամբ: Վեպի ժողովրդայնության հարցերին մենագրական ուսումնասիրություն է նվիրել Դր. Գրիգորյանը[4]: Աբեղյանը և Ղանալանյանը արժեքավոր աշխատություններ նվիրեցին հայ ժողովրդական բնարական բանահյուսությանը[5]:

Գիտական արշավախմբերի միջոցով բանահյուսական նյութեր հավաքելու գործն զգալիորեն թուլացել էր Հայրենական պատերազմի տարիներին, մասամբ և հետո: Այդ աշխատանքները վերսկսվեցին, և լայն ծավալ ստացան 1960 թ. սկսած, երբ բանագիտական բաժինը փոխադրվեց հնագիտության և ազգագրության ինստիտուտ: Ազգագրագետների հետ համատեղ խոշոր արշավախմբեր և առանձին ջոկատներ ուղարկվեցին Հայաստանի տարբեր շրջաններ, ինչպես և Վրաստան ու Ադրբեջան, նյութերի հավաքումը կազմակերպվեց համակողմանիորեն: Ֆոլկլորի բավականին հարուստ արխիվը համալրվեց նոր նյութերով:

Մեծ աշխատանք է տարվում հայկական ժողովրդական հեքիաթների հավաքման և գիտական հրատարակության գծով: Արդեն լույս են տեսել «Հայկական ժողովրդական հեքիաթների» մի շարք հատորներ, Ա. Նազինյանի ընդհանուր խմբագրությամբ[6]:

Սովետահայ բանագետների աշխատանքները ծավալվեցին նաև պրոբլեմների և թեմաների ընդգրկմամբ: Մ. Աբեղյանի աշակերտ, անվանի բանագետ Ա. Ղանալանյանը հրատարակեց մի շարք աշխատություններ, որոնց թվում «Հայկական առածանի» ժողովածուն[7] և «Ավանդապատում» աշխատությունը[8], որոնց մեջ բնութագրված, դասակարգված և արժեքավորված են հայ ժողովրդական առածները, ավանդական պատմությունները ու զրույցները: Ուսումնասիրվում են հին և նոր էպիկական երգերն ու պատմական վիպերգությունները[9]: Ս. Հարությունյանը կազմեց հայկական հանելուկների ժողովածուն և հատուկ ուսումնասիրություն նվիրեց դրանց[10]: Ուսումնասիրության առարկա դարձան բանահյուսության և գրականության կապերի, ինչպես և բանագիտության տեսական հարցերը[11]: Հրատարակվում են նաև Հյուսիսային Կովկասում բնակվող հայերի բանահյուսական նյութերը[12]:

Անցյալի բանահյուսական նյութերի հետ միասին հավաքվում և հրատարակվում են ժամանակակից գործերը, որոնց մեջ առանձին տեղ է գրավում «Լենին փաշան» վիպերգը:

Ժողովրդի բանավոր ստեղծագործական բառ ու բանի հետ միասին խոշոր աշխատանք է կատարվում նաև հայկական ժողովրդական պարերի, թատերական ներկայացումների և երաժշտական ֆոլկլորի ուսումնասիրության գծով: Առանձնապես պետք է նշել պարային շարժումների գրանցման եղանակի մշակումը պատմ. գիտ. դոկտոր Սրբ. Լիսիցյանի կողմից, մանավանդ նրա «Հայ ժողովրդական պարերը և թատերական ներկայացումները» բազմահատոր մեծարժեք աշխատությունը, որի առաջին հատորը հրատարակված է[13], երկրորդը մամուլի տակ է, իսկ երրորդ և չորրորդ հատորները պատրաստվում են հրատարակության:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը սերտ կապեր է պահպանում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտի, նրա Լենինգրադի բաժանմունքի, ազգագրության ինստիտուտի, Դորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի, ինչպես և Վրացական ՍՍՀ և Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտների հետ: Մեր ինստիտուտը մշտական մասնակցություն է ցուցաբերում ՍՍՀՄ ԳԱ կողմից գումարվող ամենամյա կոնֆերանսներին և նստաշրջաններին, որոնք նվիրվում են հնագիտության, ազգագրության և բանահյուսության գծով դաշտային արշավախմբերի աշխատանքների արդյունքներին:

Ինստիտուտի աշխատակիցները մասնակցել են պատմաբանների, հնագետների, մարդաբանների և ազգագրագետների, արևելագետների և այլ միջազգային կոնգրեսներին: Շատ աշխատակիցներ անձնական կոնտակտներ են պահպանում դեմոկրատական երկրների, ինչպես և կապիտալիստական երկրների մի շարք առաջավոր գիտնականների հետ:

Որքան էլ ծավալված լինեն գիտահետազոտական աշխատանքները ինստիտուտի առջև դեռևս ծառացած մնում են բազմաթիվ չլուծված հարցեր: Հնագետները դեռևս էլ խորացնեն նվազ ուսումնասիրված պատմական դարաշրջանների, ինչպես և հանրապետության դեռևս թույլ ուսումնասիրված շրջանների հնագիտական հետազոտությունները, վերացնելով բացերը ժամանակագրական և տերիտորիալ առումներով: Զգացվում է ընդհանրացնող խոշոր աշխատանքների պակասը: Հնագետների առջև նոր խնդիրներ են ծառացել բնական գիտությունների ընձեռած նորագույն մի շարք մեթոդները հնագիտության մեջ կիրառելու ուղղությամբ:

Ազգագրագետները և բանագետները պետք է ավելի լայնորեն ծավալեն նյութերի հավաքման դաշտային էքսպեդիցիոն, ինչպես և ստացիոնար գրառումների ու գրանցումների աշխատանքները, որպեսզի կարելի լինի կորստից փրկել ժողովրդական նյութական մշակույթի հուշարձանները, արտադրության և կենցաղի մեջ գործածված իրերն ու առարկաները, ժողովրդի հոգևոր ստեղծագործության և մշակույթի օրավուր մոռացության տրվող գանձերը, մանավանդ Արևմտյան Հայաստանի բնակչության ազգագրական արդեն անհետացող շրջաններից:

Անհրաժեշտ է հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանները գիտական մշակման ենթարկել միջազգային ինդեքսների, նորագույն մեթոդների և գիտության ժամանակակից պահանջների համեմատ և այդ եղանակով, ինչպես և գիտական բարձրորակ հրատարակություններով հայ մշակույթը դուրս բերել միջազգային ասպարեզ: Այս իմաստով խոշոր նշանակություն է ստանում հայ և մյուս ժողովուրդների մշակույթների համեմատական ուսումնասիրությունը, որով պարզ կդառնա հայ մշակույթի տեղը համամարդկային քաղաքակրթությունների մեջ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՆԵԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Ն. Լալայան, *Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931։*
2. Ա. Քալանթար, *Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935։*
3. *И. А. Орбели,* Баня и скоморок XII в., Избранные труды; Ереван, 1963, стр. 316—322.

4. *Е. Байбуртян*, Шенгавитская культура. *Ձեռագիրը պահվում է հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում։*
5. *М. З. Паничкина*, Палеолит Армении, Ленинград 1950. *С. А. Сардарян*, Палеолит в Армении. Ереван. 1959.
6. Ս. Սարդարյան. *Նախնադարյան հասարակությունը Հայաստանում. Երևան. 1967. էջ 153—158։*
7. Է. Վ. Խանզադյան. *Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում, Երևան. 1967։* Ս. Սարդարյան, *Նշված աշխատություն. էջ 161—245։*
8. Ա. Քալանթար, *Արգածը պատմության մեջ. Երևան, 1935։*
9. Ս. Սարդարյան. *Նշված աշխատությունը. էջ 113—122։*
Հ. Մարտիրոսյան. Ժայռապատկերների դասակարգման մի քանի նախնական տվյալներ. «Լրաբեր» 1970, № 9։
Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան. Սյունիքի ժայռապատկերները. Երևան, 1970։
10. *А. О. Мнацаканян*, Археологические раскопки на осушенном территории оз. Севан. «Советская археология», XXIII, 1955. его же: Раскопки курганов на побережье оз. Севан, «Советская археология», 1957, № 2.
11. *А. А. Мартиросян*, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.
12. *А. А. Мартиросян*, Город Тейшебаини, Ереван, 1961.
13. Կ. Լ. Հովհաննիսյան. *Էրեբունի, Երևան, 1968։ Նույնը ռուսերեն։*
14. *А. А. Мартиросян*, Город Аргиштихинили, СА, 1967, № 4.
15. *Б. Б. Пиотровский*, История и культура Урарту, Ереван, 1944; Его же: Ванское царство. Москва, 1959.
16. *Н. В. Арутюнян*, Новые урартские надписи Кармир-блура. Ереван, 1966.
17. *Г. А. Меликишвили*, Урартские клинообразные надписи, Тбилиси, 1953.
18. *Б. Н. Аракелян*, О некоторых результатах археологического изучения древнего Армавира. *«Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4։*
19. Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952։*
20. *Х. А. Мушегян*, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962.
21. Բ. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, գիրք 1, Երևան, 1958, գիրք 2, Երևան, 1964։*
22. *«Հնագիտական պեղումները Հայաստանում» մատենաշարով լույս են տեսել.*
I Кармир-блур, I, *Б. Б. Пиотровский*, Результаты работ археологической экспедиции Института истории Академии наук Арм. ССР и Государственного Эрмитажа 1939—1949 гг., Ереван, 1950.
II Кармир-блур, II, *Б. Б. Пиотровский*, Результаты работ 1949—1950 гг., Ереван, 1952.
III Кармир-блур, III, *Б. Б. Пиотровский*, Результаты работ 1951—1953 гг., Ереван, 1955.
IV Кармир-блур, IV, *К. Л. Оганесян*, Архитектура Теишебаини, Ереван, 1955.
V Гарни, I, *Б. Н. Аракелян*, Результаты работ археологической экспедиции Института истории Академии наук Арм. ССР 1949—1950 гг., Ереван, 1951.
VI Раскопки Головино, *А. А. Мартиросян*, Результаты работ 1929 и 1950 гг., Ереван, 1954.
VII Гарни, II, *Б. Н. Аракелян*, Результаты работ 1951—1955 гг. (античный период), Ереван, 1957.
VIII Джрвеж, I, *Н. М. Токарский*, Результаты работ Джрвежской археологической экспедиции, 1957 г., Ереван, 1959.
IX Арин-берд, I, *К. Л. Оганесян*, Архитектура Эребуни по материалам раскопок 1950—1959 гг., Ереван, 1961.
Ը Գառնի, III, Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, 1949—1956 թթ. պեղումների արդյունքները (միջին դարեր), Երևան, 1962։
XI Джрвеж, II, Вохджаберд, *Н. М. Токарский*, Результаты работ 1958—1962 гг., Ереван, 1964.
XII Գառնի, IV, Է. Վ. Խանզադյան, 1949—1966 թթ. պեղումների արդյունքները (վաղ բրոնզից մինչև ուրարտական շրջանը ներառյալ), Երևան, 1969։
23. *«Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշարով լույս են տեսել.*

I Բրոնզեդարյան հուշարձաններ, պրակ 1-ին, Գ. Հ. Միքայելյան, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1968։
II Բրոնզեդարյան հուշարձաններ, պրակ. 2-րդ, Հ. Ա. Սարտիրոսյան, Հայաստանի ուշ բրոնզեդարյան հուշարձանները, Երևան, 1969։
III Հին գարաշրջանի հուշարձաններ, պրակ 1-ին, Բ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Դ. Խաչատրյան, Հին Հայաստանի ապակին, Երևան, 1969։
IV Ժայռապատկերներ, պրակ 1-ին, Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970։
V Միջնադարյան հուշարձաններ, պրակ 1-ին, Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը 4—8-րդ դդ., Երևան, 1970։
VI Ժայռապատկերներ, պրակ 2-րդ, Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1970։
24. Ռ. Ն. Սոամելյան, Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դարերում, Երևան, 1949։
Վ. Մ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950։
Б. Б. Пиотровский, Археология Закавказья с древнейших времен до I тысячелетия до н. э., Ленинград, 1949. Его же: Искусство Урарту VIII—VI вв., Ленинград, 1962.
Ս. Դ. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետները և քարգործ վարպետները, Երևան, 1963։
Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964.
С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966.
25. *А. Болтунова*, Греческие надписи Армавира, «Տեղեկագիր», 1942, № 1—2 *Я. А. Манандян*, Армавирские греческие надписи в новом освещении, Ереван, 1946. *К. В. Тревер*, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953.
26. Կ. Դ. Վաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, Նույնի՝ Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, Նույնի՝ Հաղբատ, ճարտարապետական կառուցվածքներ և վիմական արձանագրությունները, Երևան, 1963։
27. Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելին, Երևան, 1966, պրակ 2, Դորիսի, Սիսիանի և Ղափանի շրջանները, կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Երևան, 1960, պրակ 3, Վայոց ձոր, Եղեգնաձորի և Ագիզբեկովի շրջանները, կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Երևան, 1967։

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան, 1931, հ. 2, 1941, հ. 3, 1941։
2. *С. Д. Лисициан*, Очерки этнографии дореволюционной Армении. «Кавказский этнографический сборник», I, Москва, 1955.
3. Ս. Տ. Լիսիցյան, Ազգագրական հարցարան, Երևան, 1945։
4. Առաքել Պատրիկ, Հայկական տարազ, Երևան, 1967։
5. Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1956։
6. Դ. Ս. Վարդումյան, Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956։
7. Դ. Ս. Վարդումյան, Է. Տ. Կարապետյան, Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Երևան, 1963։
Э. Т. Карапетян, Армянская семейная община, Ереван, 1957, ее же: Родственная группа «азг» у армян, Ереван, 1966:
8. Վ. Ղազյան, Հայ ժողովրդական խաղերը, 1, Երևան, 1963։
9. Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1965։
10. Վ. Պետոյան, Սասունի ազգագրությունը, Երևան, 1965։
11. Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Երևան, 1970։
12. *Д. С. Вардумян, С. Т. Еремян, С. Д. Лисициан, Э. Т. Карапетян* и др., Армяне, «Народы Кавказа», ч. II, Москва, 1962.
13. «Հայ ազգագրություն և բանահյուսություն (Նյութեր և ուսումնասիրություններ, 1», Վ. Թեմուրճյան, «Գամիրքի հայերը», Եր. Տեր-Մկրտչյան «Վանա հարսանիքը», Երևան, 1970։

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. «Սասնա ծռեր», հ. 1, Երևան, 1936, հ. 2, մաս Ա, 1944, մաս Բ, 1951։
2. «Սասունցի Դավիթ», Երևան, 1929։ Давид Сасунский, М.—Л., 1939.

3. Սասունցի Դավիթ (ժողովածու). Արմենիան-ի հրատարակություն. Երևան, 1939. Սասունցի Դավիթ (ժողովածու), Գետ. համալսարանի հրատարակություն, Երևան. 1931։

И. А. Орбели, Армянский героический эпос. Ереван. 1956.

Կ. Ա. Մելիք-Օհանջանյան. Միհրա Միհրը «Սասնա ծռեր» էպոսում, բանահյուսական հետազոտություններ (ժողովածու), 1958։

4. Դ. Ա. Դրիզորյան. Հայ ժողովրդական հերոսական էպոսը, Երևան, 1960։

5. Մ. Աբեղյան. Ժողովրդական երգեր, Երևան, 1940, Ա. Տ. Ղանալանյան. Հայ ժողովրդական աշխատանքային երգերը, Երևան, 1937։

6. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 1, Այրարատ. Երևան, 1959, հ. 2. Այրարատ, 1960, հ. 3. Այրարատ, 1962, հ. 4. Շիրակ, 1963, հ. 5, Արցախ, 1966. հ. 10, Տուրուբերան (Մուշ-Բուլանխ), 1967։

7. Ա. Ղանալանյան. Առածանի, Երևան. 1960։

8. Ա. Ղանալանյան. Ավանդապատում, Երևան, 1969։

9. Դ. Դրիզորյան. Սովետահայ վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը. Երևան. 1965։

10. Ս. Բ. Հարությունյան. Հայ ժողովրդական հանելուկները (ուսումնասիրություն). Երևան. 1960։ Նույնի՝ Հայ ժողովրդական հանելուկները (համառավաք ժողովածու)։

11. Ա. Տ. Ղանալանյան. Արովյանը և ժողովրդական ստեղծագործությունը. Երևան. 1940։ Նույնի՝ Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները. Երևան. 1963։

12 Ք. Փորշեյան. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսություն. Երևան, 1965։

13. *С. С. Лисициан*. Старинные пляски и театральные представления армянского народа. т. 1. Ереван. 1958.